

կությանն ավելի շահավետ լինի իրականացնել բնապահպանական միջոցառումներ, քան համապատասխան վճարներ վճարել շրջակա միջավայրին հասցված վնասի համար:

Ակնհայտորեն, շրջակա միջավայրի պաշտպանության ուղղությամբ միջոցառումների արդյունավետ իրականացման նախապայմաններից մեկն է հանդիսանում համապատասխան իրավական նախադրյալների ձևավորումը: Այս առումով պետք է նշել, որ տնտեսական հարաբերությունների զարգացման հետևանքով ներկայումս հանրապետությունում գործող իրավական ակտերից շատերը կորցրել են իրենց արդիականությունը, առաջացել են որոշ հակասություններ դրանց միջև, ինչպես նաև առկա են որոշ բացթողումներ: Այս առումով, խիստ կարևորվում է բնապահպանության ոլորտի իրավական և մեթոդական հենքի կատարելագործումը, առանձնակի ուշադրություն դարձնելով բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար պահանջվող նորմերի ու կանոնների, այդ թվում՝ սահմանափակումների սահմանման դեպքում իրատեսական հիմնավորումների ապահովման վրա:

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*Եվրոպական կրթական տարածաշրջանային
ակադեմիայի տնտեսագիտության ամբիոնի դասախոս*

ԲՆԱՊԱՀԱՊԱՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԼՅԱԿՆԵՐԸ

Շրջակա միջավայրի պաշտպանության հիմնախնդիրները կարող են առավել մեծ արդյունավետությամբ լուծվել միայն պետության անմիջական մասնակցության և պետական հիմնավորված ու արդարացված միջամտության պարագայում: Ընդ որում, գոյություն ունեն պետական միջամտության մի քանի ձևեր, որոնց օգնությամբ պետությունը կարգավորում է տնտեսական համակարգում տեղի ունեցող մի շարք գործընթացներ: Բնապահպանության ոլորտում ծագող հարաբերությունների կարգավորումը կարող է իրականացվել տարբեր մակարդակներում՝ քաղաքականության մշակումից մինչև տարաբնույթ նախագծերի իրականացում: Բացի այդ, պետությունն ինքը կարող է անմիջական մասնակցություն ունենալ շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված տարբեր նախագծերի իրականացմանը:

Մշակելով և իրականացնելով բնապահպանական քաղաքականություն, պետությունը հետապնդում է տնտեսավարող սուբյեկտների վրա արդյունավետ ներգործության նպատակ: Նման քաղաքականությունը, ըստ էության, կարող է իրականացվել տարբեր եղանակներով, մասնավորապես, շրջակա միջավայրի համար վնասակար գործունեության տեսակների խիստ ռեժիմով հարկման, նմանատիպ գործունեությամբ զբաղվելու սահմանափակման և այլ միջոցներով:

Պետական բնապահպանական քաղաքականությունը հանդիսանում է սոցիալ-տնտեսական իրավիճակի կառավարման կարևոր գործիքներից մեկը: Մեր կարծիքով, պետական բնապահպանական քաղաքականության տակ պետք է հասկանալ քաղաքական, տնտեսական, իրավական և այլ հատուկ միջոցառումների համակարգ, որոնք ձեռնարկվում են պետության կողմից բնապահպանական իրավիճակի կառավարման և երկրի տարածքում տեղաբաշխված բնական ռեսուրսների արդյունավետ և ռացիոնալ օգտագործման նպատակով:

Բնապահպանական քաղաքականության առանձնացումը որպես պետական քաղաքականության առանձին տարր (ռազմական, մշակութային, տնտեսական, սոցիալական, գիտատեխնիկական, տեղեկատվական և պետական քաղաքականության մյուս ուղղությամբների հետ

միասին) զարգացած երկրներում տեղի ունեցավ 70-80-ական թվականներին՝ ի հետևանք բնապահպանության ոլորտում արժանագրված ճգնաժամային երևույթների: Դրա հիմքը, որպես կանոն, կազմում է բնապահպանական հիմնախնդիրների լուծման պաշտոնապես ընդունված ընդհանուր հայեցակարգը, որն անմիջականորեն սահմանում է պետական բնապահպանական քաղաքականության բովանդակությունը և հիմնական ուղղությունները:

Ընդհանուր առմամբ, պետական բնապահպանական քաղաքականության հիմնական ուղղությունների շարքին են դասվում բնապահպանական գործունեության կարգավորման իրավական և տնտեսական մեխանիզմի ձևավորումը, տվյալ ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտի ձևավորումը և կատարելագործումը, էկոլոգիապես մաքուր արտադրությունների զարգացման համակողմանի խթանումը, պետական էկոլոգիական մոնիտորինգի միասնական համակարգի ձևավորումը, էկոլոգիական փորձաքննության ինստիտուտի զարգացումը, բնապահպանության ոլորտում որոշումների ընդունման գործընթացին հասարակության լայն զանգվածների մասնակցության ապահովումը, միջազգային համագործակցության խորացումը և այլն:

Միաժամանակ, պետք է նշել, որ պետական բնապահպանական քաղաքականության արդյունավետ իրականացման վրա իրենց համապատասխան ազդեցությունն են ունենում այնպիսի գործոններ, ինչպիսիք են երկրում բնապահպանական հիմնախնդիրների խորության աստիճանը, սոցիալ-տնտեսական խնդիրների բնույթը, ֆինանսական հնարավորությունների սահմանափակությունը, ռեսուրսախնայող և բնապահպանական ուղղվածություն ունեցող տեխնոլոգիաների զարգացման մակարդակը, միջազգային պարտավորությունները, բնակչության վերաբերմունքը շրջակա միջավայրի պաշտպանության խնդիրների նկատմամբ և այլն: Բնապահպանական պետական քաղաքականության հայեցակարգային հիմքերի ձևավորման վրա իր զգալի ազդեցությունն է ունենում նաև բնապահպանական իրավիճակի կարգավորման տնտեսական մեխանիզմների գործունեության սկզբունքների ընտրությունը:

Տնտեսության զարգացման ներկա փուլում շրջակա միջավայրի պաշտպանության խնդիրները ձեռք են բերում մեծ կարևորություն: Հատկապես տեխնոլոգիական առաջընթացով պայմանավորված, էկոլոգիական հիմնախնդիրների շրջանակը բավականաչափ ընդլայնվել է՝ ենթադրելով այդ ուղղությամբ համապատասխան միջոցառումների իրականացում: Շրջակա միջավայրի պաշտպանության հարցերը ուղղակիորեն առնչվում են երկրի տնտեսական և սոցիալական զարգացման հիմնախնդիրների հետ: Ակնհայտ է, որ ցանկացած տնտեսական գործունեություն իր ազդեցությունն է թողնում շրջակա միջավայրի վրա: Այս պարագայում, պետության և հասարակության խնդիրն է հնարավորինս նվազեցնել շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի վրա տնտեսական գործունեության վնասակար ներգործությունները՝ ապահովելով շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանության երաշխիքները: Ըստ էության, կլիմայի գլոբալ փոփոխությունները, օզոնային շերտի քայքայումը, օդային և ջրային ավազանների աղտոտումը, արդյունաբերական վթարների ներգործությունները, հողերի դեգրադացիան (անապատացում, աղակալում, էրոզիա և այլն), կենսաբազմազանության առանձին տեսակների անհետացման վտանգը տնտեսական գործունեության արդյունք են, որոնք ամբողջ աշխարհում առաջնային լուծում պահանջող խնդիրներ են: Ուշադրության արժանի են նաև վտանգավոր քիմիական նյութերը, կայուն օրգանական աղտոտիչները, արտադրության գործընթացում առաջացող վտանգավոր արտադրական թափոնները, ինչպես նաև մարդու կենսագործունեության հետևանքով առաջացած կենցաղային թափոնները, որոնք համընթացում են շրջակա միջավայրի աղտոտման հիմնական աղբյուրներից մեկը, և որոնց գործածությունը պահանջում է կառավարման լուրջ մոտեցում:

Ակնհայտ է, որ նման պայմաններում շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում պետական բնապահպանական քաղաքականությունը դառնում է կարևոր միջոց գոյություն ունեցող հիմնախնդիրների լուծման գործում: Որպես կանոն, առանձնացվում են բնապահպանական քաղաքականության գործիքների երեք հիմնական խումբ.

- ադմինիստրատիվ կամ կանոնակարգող մեթոդներ, որոնք ուղղակի ներգործության միջոցներ են և անմիջական ազդեցություն են ունենում շրջակա միջավայրն աղտոտողների վարքագծի վրա: Այս մեթոդներն իրացվում են նորմատիվ իրավական ակտերի ընդունման միջոցով, որի արդյունքում սահմանվում են այն նպատակները, ստանդարտները կամ նորմերը, որոնց պարտավոր են հետևել շրջակա միջավայրի համար վտանգ ներկայացնող գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտները: Այլ կերպ ասած, ադմինիստրատիվ մեթոդները սահմանում են վարքագծի պարտադիր նորմեր, որոնց խախտման դեպքում մեղավորները օրենսդրությամբ սահմանված կարգով տուգանվում են, ենթարկվում վարչական կամ քրեական պատասխանատվության: Այս մեթոդի հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ աղտոտողը չունի վարքագծի ընտրության իրավունք. նա պարտավոր է ենթարկվել սահմանված պահանջներին կամ վճարել տուգանքներ իրավական կամ ադմինիստրատիվ ընթացակարգերին համապատասխան:
- Տնտեսական գործիքներ կամ տնտեսական խթանների վրա հիմնված մեթոդներ: Դրանց կարևոր առանձնահատկությունը կայանում է նրանում, որ շուկայի մասնակիցներին (տնտեսավարող սուբյեկտներին) տրամադրվում է սեփական գործունեության ընտրության և որոշակի պահանջներին համապատասխանեցման ազատություն՝ հնարավորություն ընձեռելով սուբյեկտներին նախընտրելի եղանակներով առավելագույնի հասցնել սեփական շահույթն առկա սահմանափակումների պայմաններում:
- Մոցիալական մոտիվացիայի մեթոդներ, որոնք առավել հաճախ կիրառվում են ադմինիստրատիվ և տնտեսական միջոցների հետ համատեղ: Այս մեթոդի կիրառման նպատակը հանդիսանում է բարոյահոգեբանական այնպիսի մթնոլորտի ձևավորումը, որը կնպաստի տնտեսավարող սուբյեկտի վարքագծի ցանկալի փոփոխությանը: Այս խմբի մեջ են մտնում այնպիսի միջոցներ, ինչպիսիք են էկոլոգիական կրթությունը, էկոլոգիական տեղեկատվությունը, թրեյնինգների անցկացումը և բարոյական ներգործության տարբեր միջոցներ: Այս խմբի գործիքներից են հանդիսանում պետական բնապահպանական կառույցների և մասնավոր սեկտորի կամ արդյունաբերողների խմբի և տեղական ինքնակառավարման մարմինների միջև կնքվող կամավոր համաձայնությունները: Բացի այդ, լայնորեն օգտագործվում է նաև արտադրանքի էկոլոգիական ապրանքանիշը, որը վկայում է դրա բնապահպանական անվտանգության մասին: Չնայած այն հանգամանքին, որ այն չի հանդիսանում պարտադիր պետական էկոլոգիական ստանդարտ, այդուհանդերձ, կարող է ձեռնարկության կողմից օգտագործվել սպառողների մոտ սեփական իմիջի ամրապնդման համար:

Բնօգտագործման ոլորտի ուղղակի կարգավորման առավել տարածված ձևերից մեկն է ստանդարտների կիրառումը, որոնց միջոցով սահմանվում են ձեռքբերման ենթակա որոշակի էկոլոգիական ցուցանիշներ: Որպես կանոն, կիրառվում են էկոլոգիական ստանդարտների մի քանի տեսակներ.

- որակի ստանդարտներ, որոնցով սահմանվում են ջրային ռեսուրսները և մթնոլորտային օդը աղտոտող նյութերի շրջակա միջավայրում թույլատրելի կոնցետրացիան,
- թափոնների և աղտոտող նյութերի արտանետումների ստանդարտներ, որոնք սահմանում են դրանց թույլատրելի չափը,
- տեխնոլոգիական ստանդարտներ, որոնց միջոցով սահմանում են արտադրության այս կամ այն գործընթացում կիրառվելիք տեխնոլոգիաները:

Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարի կարևոր գործիքներից մեկն է հանդիսանում տարբեր թույլտվությունների, լիցենզիաների և թույլատրող փաստաթղթերի (էկոլոգիական սերտիֆիկացիա) տրամադրումը: Դրանք, որպես կանոն, սահմանում են արտադրողների թույլատրելի սահմանները, ինչպես նաև այն պայմանները, որոնց պետք է բավարարի դրանք ստացող սուբյեկտը: Ճիշտ և ժամանակին կիրառման դեպքում ադմինիստրատիվ մեթոդները հնարավորություն են տալիս դրանք կիրառող մարմինն ունենալ էական հաջողություններ շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման, ինչպես նաև այդ նպատակով արդյունավետ վերահսկողություն իրականացնելու հարցում:

Մեթոդների հաջորդ խումբը դա տնտեսական գործիքների խումբն է, որը վերջին տարիներին առավել լայն կիրառություն է գտնում տարբեր երկրներում իրականացվող բնապահպանական քաղաքականության մեջ: Ընդ որում, կիրառվում են տնտեսական գործիքների տարբեր ձևեր, սակայն դրանք խոշորացված կերպով կարելի է միավորել չորս հիմնական խմբերի մեջ.

- հարկեր, տուրքեր, վճարներ,
- բնօգտագործման կոնկրետ տեսակի համար քվոտաների տրամադրում,
- գրավավերադարձման սխեմաներ,
- նորմատիվ-իրավական ակտերի կատարման խթաններ:

Այժմ համառոտակի անդրադառնալով դրանցից յուրաքանչյուրին:

1. Հարկեր, տուրքեր, վճարներ.

- արտադրողների համար գանձվող վճարներ, որոնք ուղղակի վճարներ են՝ հիմնված շրջակա միջավայր արտադրողի թափոնների որակական և քանակական գնահատումների վրա,
- կոմունալ ծառայությունների վճարներ, որոնք ուղղակի վճարներ են բնօգտագործման ոլորտում ծառայություններ մատուցող կոմունալ ծառայությունների ծախսերի ծածկման համար,
- էկոլոգիապես ոչ մաքուր արտադրանքի համար հարկեր և վճարներ, որոնք սահմանվում են արտադրության, սպառման և ուտիլացման փուլերում շրջակա միջավայրն աղտոտող ապրանքների նկատմամբ: Նպատակը վերջիններիս գների բարձրացումն է՝ դրանց սպառման ծավալների կրճատման նպատակով: Հարկման էկոլոգիական կոմպոնենտը դրսևորվում է հարկման դիֆերենցացման միջոցով, երբ առավել ցածր հարկերը կիրառվում են էկոլոգիապես ավելի մաքուր արտադրանքի նկատմամբ և հակառակը:

2. Երկրորդ խումբը սուբսիդիաներն են, որոնք հանդես են գալիս տարբեր ձևերով: Դրանք կարող են տրամադրվել աղտոտումների ծավալը նվազեցնելու նպատակով: Սակայն գործնականում դրանք առավել հաճախ տրամադրվում են բնապահպանական առումով ընդունելի ներդրումների խթանման համար և հանդես են գալիս որպես ֆինանսական աջակցության ձև՝ դրամաշնորհների, արտոնյալ վարկերի, պետական կապիտալ ներդրումների տեսքով:

3. Թույլտվությունների կամ քվոտաների վաճառքը, ըստ էության, հանդիսանում է տնտեսական գործիքների և ադմինիստրատիվ մեթոդների յուրահատուկ կոմբինացիա, քանի որ արտադրողների քվոտաները սահմանվում են աղտոտումների տարբեր աղբյուրների համար իշխանության տեղական մարմինների կողմից: Միաժամանակ, եթե աղտոտող ձեռնարկությունը ամբողջությամբ չի օգտագործում իր քվոտան, այսինքն արտադրողների ծավալը փոքր է ստացվում սահմանված լիմիտից, ապա նա կարող է այդ տարբերությունը վաճառել մեկ այլ աղտոտող ձեռնարկության: Այս մեխանիզմը հիմնականում իր կիրառությունն է գտել ԱՄՆ-ում և սահմանված է այնպես, որ քվոտաների վաճառքը հնարավորություն է տալիս նվազեցնել ձեռնարկության էկոլոգիական

ծախսերը և պահպանել բնապահպան կազմակերպությունների կողմից սահմանված արտամետոմենտների ծավալը:

4. Գրավավերադարձման մեխանիզմը ենթադրում է գրավային վճարի (դեպոզիտի) կատարում որոշակի ապրանքի ձեռքբերման ժամանակ (օրինակ, զարեջրի ձեռքբերման ժամանակ գրավը կատարվում է ապակյա տարայի համար, որի արժեքը ներառված է զարեջրի գնի մեջ): Գրավային գումարը փոխհատուցվում է մաս-մաս կամ ամբողջությամբ օգտագործված ապրանքի վերադարձման ժամանակ: Այս մեխանիզմը լայնորեն կիրառվում է տարբեր խմիչքների փաթեթավորման և վաճառքի ժամանակ:

Բնապահպանական քաղաքականության իրականացման մեթոդներից են բնապահպանական կառույցների և տնտեսավարող սուբյեկտների միջև կնքվող կամավոր համաձայնությունները, որոնք ներկայումս լայն տարածում են ստացել Արևմտյան Եվրոպայի երկրներում և ԱՄՆ-ում: Պետք է նշել, որ «բնապահպանական կամավոր համաձայնություն» հասկացության ընդհանուր սահմանում գոյություն չունի: Սակայն խոսքը գնում է տնտեսավարող սուբյեկտների կողմից կամավոր կերպով ընդունվող պարտավորությունների մասին, որոնք ընդլայնում են գոյություն ունեցող էկոլոգիական պահանջները: Պարտավորությունների ավելացումը դրականորեն է անդրադառնում սուբյեկտի համբավի վրա և խթանում ընդհանուր ինովացիոն քաղաքականության զարգացմանը: Այն ձեռնարկությունները, որոնք ստանձնում են լրացուցիչ պարտավորություններ, հնարավորություն են ստանում նախապես պատրաստվելու առավել խիստ ստանդարտների պահանջների բավարարմանը: Մյուս կողմից, նման նախաձեռնությունը պետական բնապահպանական կառույցներին հնարավորություն է տալիս խոսափել առավել խիստ նորմատիվների սահմանումից, խնայելով դրանց մշակման, ներդրման և վերահսկողության ուղղությամբ կատարվելիք ծախսերը:

ՏԱՏՅԱՆԱ ՕՐԱՆՅԱՆ

*ՀՀ ԳԱՄ Մ. Զոքանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի առաջատար գիտաշխատող, տ.գ.թ.*

ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ԱՆՅԱՎԱՍԱՐԱԶԱԾ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Տարածաշրջանային միավորների զարգացման մակարդակների անհամաչափության մեղմացմանն ուղղված համալիր միջոցառումների մշակման և իրականացման գործում մեծ կարևորություն ունի տարածքային միավորների զարգացման գնահատումը: Այսպիսի գնահատումների անհրաժեշտությունը զգացվում է սահմանափակ ռեսուրսների նպատակային ու արդյունավետ բաշխումն ապահովելու գործընթացում: Տարածաշրջանային միավորների հավասարաչափ զարգացումը կախված է սեփական միջոցների ծավալից և բյուջետային ֆինանսավորումից:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ 2002-2007թթ. արդյունաբերական արտադրանքի ծավալն ըստ մարզերի ավելացել է 1.9 անգամ, ընդ որում արտադրանքի աճի ամենաբարձր տեմպերը գրանցվել են Սյունիքի մարզում՝ 4.1 անգամ և Լոռու մարզում՝ 2.8 անգամ, իսկ ամենացածրը՝ Արմավիրի ու Շիրակի մարզերում:

Այդուսակ 1-ում, որտեղ ներկայացված են արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերն ըստ ճյուղերի 2007թ., այն 2006թ. նկատմամբ, որտեղից երևում է, որ հանքագործական արդյունաբերությունում ամենաբարձր ցուցանիշներն ունեն Սյունիքի և Լոռու մարզերը: Նրանց